

Այդ կոնֆերենցիայի համար յատուկ բեֆերատներ կունենան պրոֆ. Գրիւտցմախերը «Եռանձնեայ Աստուածը մեր Աստուածն է» և պրոֆ. Վիլկէն՝ «Հին կտակարանի նշանակութիւնը քրիստոնէական հաւատի համար» բնարաններով:



Յոյն աւելելի Հին-եկեղեցական աստուածաբանական գիտութիւնք իւր ծաղկման երջանում (IV-V դդ.). նրա գլխաւոր ուղղութիւնները եւ բնորոշ յատկութիւնները:

(Շարունակութիւն)

II.

Եկեղեցական կեանքի նոր պայմանների ազդեցութիւնը աստուածաբանական ուղղութիւնների փոխադարձ յարաբերութեան վերայ:—Նոր Աղէքսանդրիայի դպրոցը. Ս. Աղէքսանդրի, Դիդիմոսի, Կապադովկիայի հայրերի, Ամթիլորէսի, Ապոլինարի, Ս. Կիրիլի Աղէքսանդրացու եւ Եւսեբիոս Կեսարացու աստուածաբանութեան բնաւորութիւնը:—Փոփոխութիւններ Աղէքսանդրիայի մեկնաբանութեան մէջ: Անտիոքի դպրոցը. նրա պատմութեան շրջանները եւ նրա գործիչների աստուածաբանական գործունէութեան բնաւորութիւնը:—Փորթ-Ասիայի աստուածաբանութիւնը Դ-րդ դարում. Ս. Կիրիլի Երուսաղէմացին:—Մարկելոս Անկիրիացին:—Ս. Եպիփան Կիպրացին.

Դ-րդ դարի առաջին քառորդին մենք մտնում ենք նոր շրջանի՝ հին եկեղեցական աստուածաբանութեան ծաղկման ժամանակի մէջ՝ եկեղեցւոյ արտաքին զբոլթեան հաստատութիւնը նրան կատարեալ հնաբաւորութիւն տուեց ազատ և բազմակողմանի ծաղկման, իսկ հերետիկոսները դէմ մղած կռիւները—հարուստ նիւթ տուին իւր աշխատանքի համար: Հանդէս եկան եկեղեցւոյ ուսուցիչների նոր սերունդներ, որոնք ճոխացած էին իրենց նախորդների դործունէութեան փորձերով: Այս շրջանի առանձնայատկութիւնը պէտք է ընդու-

նեւ եկեղեցական ընդհանուր ժողովները ըստ հնարաւորութեան կազմուած ըստ եկեղեցիներն ներկայացուցիչներէց, և տեղական ժողովները, որոնք կազմուած էին շատ յաճախ, երբեմն միանգամից մի քանի տեղ միասին. այդ ժողովները հանդիսանում են օրդաններ ոչ միայն կառավարութեան, այլ և հաւատոյ վարդապետութեան, բարձր հեղինակաւորութեամբ։ Այս ժողովները ունին ցարդ մեծ նշանակութիւն նաեւ եկեղեցական աստուածաբանութեան գիտութեան զարգացման պատմութեան համար։ Նախընթաց ժամանակի աստուածաբանական ուղղութիւնները տեղական եկեղեցիներէ ներքին կեանքի խիստ կղզիացման պատճառով, չնայած դրականութեան աչքի ընկնող արտադրութիւնների կենդանի փոխանակութեան, մնում էին յատկապէս որոշ տիպերի և շրջանների սեպհականութիւն, որոնց կեանքի պայմանների մէջ այդ ուղղութիւնները իրենց արմատներն էին ձգել։ Իւրաքանչիւր դպրոց շատ թէ քիչ առանձնացած էր, թանկ էր գնահատուած իւր աւանդութիւնները, որոնց և վկայութեան էր կոչում, իւր ուղղութիւնը և մեթոդները համարում էր ամենալաւ երաշխաւորութիւն ուղղափառ վարդապետութիւնը ճանաչելու համար, և կոսկածանքով էր վերաբերւում միւս դպրոցների առանձնայատկութիւններին։ Տեղական, իսկ առաւել տիեզերական ժողովներում տարբեր աստուածաբանական ուղղութիւններ անմիջական յարաբերութեան մէջ էն մտնում, միմեանց դէմ վէճեր ունենում, փոխադարձաբար ազդում էին միմեանց վրայ, հարթում էին ծայրայեղ տարօրինակութիւնները. այդպիսով պարզւում էր որոշ ուղղութիւնների կամ առանձին կողմերի մէջ եղած կենսունակութիւնը և ժամանակակից եկեղեցական կարիքներին համապատասխան լինելը և անպէտքութիւնը ուրիշների, իսկ ըստ միասին բարձրացնում էին եռանդը, օգնում էին աստուածաբանական գիտութեան զարգացման։ Որոգինէսի հզօր հոգին շարունակում էր իւր ազդեցութիւնն ունենալ աստուածաբանական մտքի ընթացքի վերայ. կարելի է ասել, որ Դ. և Ն. -րդ դարերի ըստ աստուածաբանները աշխատում էին Որոգինէսից ոտացած աւելի կամ պակաս հոգեւոր ժառանգութեամբ, մասամբ անընդմիջաբար մօտենալով նրան, մասամբ նրա ստեղծած աստուածաբանական գիտութեան ուղղութեան ընդգիմադիր լինելով, բայց միևնոյն ժամանակ հոգեւորութեան ինքնուրուի նրա գիտական իդէալներով։ Այդ պատճառով էլ Դ. և Ն. դարերի զանազան աստուածաբանական ուղղութիւնները սովորաբար որոշւում են Որոգինէսի հետ ունեցած նրանց այս կամ այն յարաբերութեամբ։ Բայց եթէ Որոգինէսին աւելի մօտիկ աշակերտների և հետեւողների շրջանում չէր

կարելի խօսել նրա ռիտեմի ամբողջ ազդեցութեան մասին, ևս առաւել այդ հնարաւոր էր այժմ, առանձնապէս սկսուած կը-
ռւիւնների բնաւորութիւնն աչքի առաջ ունենալով: Նկեղեցւոյ
և պետութեան յարաբերութիւնների փոխուած ներկայ շրջա-
նում, անցքերի եկեղեցական—պատմական կեանքի ընթացքի վե-
րայ խիստ ազդեցութիւն ունեցան նաև թէ քաղաքական և թէ
եկեղեցական—քաղաքական տարրերը. այնուամենայնիւ քրիս-
տոնէական վարդապետութեան պատմութեան մէջ էական դո-
րութիւններ մնում են կրօնական դադափարները, քրիստոնէա-
կան վարդապետութեան մասին քրիստոնէութեան և փրկութեան
դադափարի որոշ ընդհանուր հայեացքները. ուստի և դրոյ
տարրերը չկարողացան եկեղեցական կեանքի խորքը թափան-
ցել և ազդեցութիւն անել առտուածաբանական մաքի ուղղու-
թեան և ներքին բնաւորութեան վերայ:

Մինչև եւրոպացի կէսը դաւանաբանական շարժումների
մէջ առաջնորդող նշանակութիւնը պատկանում էր Աղէքսան-
դրիայի առտուածաբանութեան: Սակայն այդ դպրոցում ուղղու-
թեան խիստ միութիւն չկար, և անհրաժեշտ է նրա մէջ մի քանի
հոսանքներ նկատել, կամ թէ, գոնեա, տարբերութիւններ, որ,
նկատուում էին նոյն իսկ Աղէքսանդրիայում: Դրանք պայմանա-
ւորում են առտուածաբանական գործիչների անհատական
առանձնայատկութիւններով և նրանց կեանքի յարաբերութեան
բնաւորութիւնով: Այստեղ, Որոգլինէոսի տեսութեան և մեկնա-
բանութեան դարգացման գլխաւոր աեղը և հայրենիքում, ար-
դէն նախորդ շրջանի վերջին, ինչպէս առուեցաւ, յեղաշրջումն
է սկսուում դէպի եկեղեցական աւանդութիւնը և ո. Գրքի բէա-
ւականութիւնը: Դիոնիսիոս մեծի և Պետրոս եպո. ի ժամանակի
եկեղեցւոյ «ուղղադոսն» քրիստոնեաները ցոյց են տալիս հետ-
քեր այն ուղղութիւնը ամրացնելու, որ նոր Աղէքսանդրիական
անունն ստացաւ: Նիկիոյ ժողովի ժամանակներում այդ ուղ-
ղութեան ներկայացուցիչը Աղէքսանդրիայի դպրոցում հանդէս է
գալիս Աղէքսանդրիայի եպիսկոպոս Աղէքսանդրը, արիանոսա-
կան մոլորութեան առաջին եռանդուն մերկացնողը, որ միան-
գամից և պարզ կերպով որոշեց նրա էութիւնը և նրանից ծա-
գող հեռեանքները: Որքան որ նրա գրականական գործունէու-
թիւնից պահպանուած յիշատակարանների հիման վրայ դատել
կարելի է, նա—անպայման Որոգլինական է աջակողմեան ուղ-
ղութեան, որ միացրել էր Աղէքսանդրիայի առտուածաբանու-
թեան բարձր փիլիսոփայական ռիտեմների լաւ կողմերը եկե-
ղեցական աւանդութեան վարդապետութեան հետ: Երբև նրա
առտուածաբանութեան ուղղութեան ամենալաւ յատկանշան

ժառանգում է Սոհրատ պատմագրի նկատողութիւնը, որ Ս. Աղէքսանդրը φιλοσοφῶν ἐπισολόγει է (եկեղ. պատմ. I. 5): Իւր հարկադրուած աստուածաբանական բացատրութիւններով, որոնք դրուել են արդէն ծերութեան ժամանակ արիստական շարժման հէնց սկզբում, նա վկայութիւն է տալիս այն աստուածաբանական միջնորդի մասին, որի մէջ սկիզբն առան իւր յաջորդի՝ Ս. Աթանասի տեսութիւնները, որը մեծացել էր իւր ազդեցութեան տակ և եղել էր իւր կեանքի ընթացքում գործունեաց օգնական: Սակայն, նոր-Աղէքսանդրիական ուղղութեան վերայ վերջնական կնիք դրեց Ս. Աթանասը:

Եկեղեցւոյ մեծ հայր, հաւատի ուղղափառ դաւանութեան անդադրում պաշտպան Ս. Աթանասը ինքնուրոյն մտածող չէր և մաքուր տեսութիւնը նրան չէր գրաւում, նա, ինչպէս Որոգինէսը, աչքի չէ ընկնում առանձնայատուկ գիտական բմբռնումներով: Այնուամենայնիւ նրա եկեղեցական — պատմական անչափ նշանակութիւնը հիմնւում է ոչ միայն արիստականութեան դէմ մղած կռուի մէջ ցոյց տուած նրա կենսական մեծ քաջութեան վերայ, այլ և դիտական աստուածաբանութեան բնաւորութեան և ուղղութեան յճառական յեղափոխութեան վերայ*: Դրան հասան աստուածաբանական մտքերի և գիտական հասկացողութիւնների առանձնայատուկ նոր շաղկապմամբ, — որոնք բացուած էին և նախորդների աստուածաբանութեան մէջ դործ էին դրուած, և քրիստոնէական կրօնի էութեան և նրա մարդկութեան համար ունեցած նշանակութեան խորին հարկացողութեան համաձայնութեամբ: Ս. Աթանասը հանդիսանում է որոգինիստ այն ուղղութեան, ինչ որ Աղէքսանդրը, և նրա աստուածաբանութեան մէջ մտան ամենից առաջ աջակողմեան որոգինիզմի և Աղէքսանդրիոյ եկեղեցական աւանդութեան այն էական տարրերը, որով բնորոշւում է նաև նրա նախորդի աստուածաբանութիւնը, նա իւրացրեց նաև Որոգինէսի աստուածաբանութեան բանաձևերը: Առանձնապէս Որոգինէսի ազդեցութիւնը երեւում է Ս. Աթանասի առաջին աշխատութիւնների վերայ. («Հեթանոսների դէմ» և «Բանի մարմնագման մասին»), որոնք դրուել են արիստականութեան դէմ մղած կռուից առաջ և յայտնի են տեսութեան խորութեամբ, գիտականութեամբ և սիստեմատիկականութեամբ: Ս. Աթանասը Որոգինէսի համար երբէք կշտամբի խօսք չէ ասում, նա նոյն իսկ գովում է նրան ինչպէս «բազմագէտի» և «աշխատասիրի», Թէագնիստին կոչում

* Ср. проф. И. В. Поповъ, Религіозный идеалъ св. Аѳанасія («Богосл. Вѣстн.» 1903 г., декабрь, 1904 г. мартъ и май).

է «հրաշալի և յարգանքների արժանի»*, իւր մի առանձին աշխատութեան մէջ աշխատում է արդարացնել Պիոնիոսին ստորագրելիութեան դադափարի մէջ մեղադրանքից և վերոյիշեալ բոլոր անձնաւորութիւնների մէջ տեսնում է նիկիական հաւատի հին վկաներին**։ Որոշինէսի ազդեցութեան հետ ու Սթանասի աստուածաբանութեան վերայ աչքի ընկնող ներգործութիւն արել է նաև Պղատոնի փիլիսոփայութիւնը։ Սակայն Աղէքսանդրիայի աստուածաբանութեան մէջ հաստատուած այս տարրերի հետ ու Սթանասը շաղկապում էր նաև ու Իրենէոսի Փոքր-Ասիայի աստուածաբանութեան սոտերիօլոգիական վարդապետութիւնը ու Իրենէոսի և Սթանասի սերտ մերձաւորութիւնը և սոտերիօլոգիական տեսութիւնները համաձայնութիւնը անվիճելի է։ Ճշմարիտ է, ու Սթանասը պղատոնական փիլիսոփայութեան հասկացողութեանց միջոցով ու Իրենէոսի վարդապետութեանը փիլիսոփայական հիմք տուեց, այնուամենայնիւ փոքր-ասիական աստուածաբանութիւնը այնպիսի խիստ ազդեցութիւն արաւ ու Սթանասի աստուածաբանութեան ընդհանուր սխաւեմի վերայ, որ նոյն իսկ որոշինիզմը էական փոփոխութիւններ կրեց, որի հետևանքն եղաւ եկեղեցական գիտական աստուածաբանութեան իսկական վերանորոգութիւնը։ Նա քրիստոնէական ամբողջ աշխարհայեցողութիւնը կենդրոնացրեց փրկութեան դադափարի մէջ և հաստատեց քրիստոնէութեան էութեան ըմբռնումը, ինչպէս լիոնութեան կրօնի էութիւն։ Այս դադափարը հաստատուելիս ինկառի առաւ ու Իրենէոսը ու Սթանասը դարձան այդ իւր «Բանի մարմնացման մասին» աշխատութեան մէջ, իսկ վերջը առանձնապէս այդ դադափարը առաջ մղեց և աւելի խորացրեց հերետիկոսութեան դէմ մղած կռուի մէջ։ Նրա բոլոր ձգտումները ուղղուած են Փրիչին և փրկութեանը, փրկութեան դադափարի տէսակէտից քրիստոնէութեան մէջ Քրիստոսի կենդրոնական նշանակութեան ճանաչելուն։ Փրկութեան խորհրդի մէջ ու Սթանասը խորին կրօնական զգացմամբ ճանաչեց այն ճանապարհը, որը միայն տանում է դէպի եկեղեցական դաւանութեան մտքի հասկացողութիւնը, թէ Յիսուս Քրիստոսի անձնաւորութեան մէջ աշխարհ է եկել կատարեալ և ճշմարիտ Աստուածութիւնը։ Կրօնական մեծ սկզբունքի մէջ — Աստուածամարդի միջոցով մարդկութեան փրկութիւնը աստուածային կեանքի համար, — քրիստոնէական հաւատն և միաբնակեց

* Къ Серапиону IV. 9 русск. пер. 1903 г. ч. 3 стр. 76.

** Объ опред. Никейскаго собора: русск. пер. изд. 1851 г. ч. 1. стр. 348, 352. Ср. Сократъ, Церк. ист. VI. 13.

է աստանային իրենց չափը, և աստուածաբանութիւնը—իւր ուղ-
ղութիւնը: Այն հաստատութեան և յաջորդականութեան մէջ,
որոնցով ու Աթանասը հաւատի բոլոր սկզբունքները բերեց այդ
հիմնական և կենդրոնական դադարաւորին, պարունակուած է
կրօնական մտքի և քրիստոնէական կեանքի համար ու Աթանասի
աչքի ընկնող մեծութիւնը և նշանակութիւնը: Թէև ու Աթա-
նասը խորը կերպով իրեն դրաւող արիտոսականութեան գէմ
մղած կուսի մէջ չկարողացաւ սիստեմատիկաբար գրել, և կա-
տարելապէս բանալ ու հաստատել իւր մտքերը, այնուամենայ-
նիւ նրա վիճաբանական գրուածքների մէջ էլ հիմք ծառայում
է ճշմարիտ քրիստոնէական տեսութիւնը, այնպէս որ ու Աթա-
նասը իւր դրական գործունէութեան ամբողջ ժամանակի
ընթացքում շթողեց գիտական հող, նա որոշ չափով թուլա-
ցրեց միայն Որոգինէսի աստուածաբանութեան բնազանցական
իդէալիզմը կրօնական—գործնական սկզբունքներով, գէպի որոնց
կողմը նա իւր ձգտումներով բաւական հակուած էր: Այդ շրջա-
նակի մէջ էր դրուած նաև Որոգինէսի աստուածաբանութիւնը:
Ս Աթանասը սահմանափակում է Որոգինէսի ձգտումները՝ քրիս-
տոնէութիւնը և բնական ճանաչողութիւնը կրօնական փիլիսո-
փայութեան ընդհանուր սիստեմի մէջ միացնելու, և քրիստո-
նէական վարդապետութեան միջից դուրս է ձգում որոգինիստ-
ների դուռ փիլիսոփայական հարցերը, հնազանդեցնելով վերա-
ցական և տիեզերախօսական շահերը կրօնական-գործնական
նպատակներին: Այդպիսով ու Աթանասը աղէքսանդրացիների աս-
տուածաբանական գիտութեան մէջ մտցրեց նոր հոտանք, և
դրանով եկեղեցական աստուածաբանութեան նոր կնիք և ուղ-
ղութիւն տուեց, որոնցով և յաջորդ ամբողջ եկեղեցական աս-
տուածաբանական գիտութեան էական բնաւորութիւնը որոշ-
ուեց:

Գրք դարի կէսերին նկատուում է յունական աստուածա-
բանութեան մէջ միանգամայն որոշ գիտական բարձրացում,
որը մի կողմից կապուած է աւելի ազատ յարաբերութեամբ
հին գիտութեան հետ*, իսկ միւս կողմից Որոգինէսի գիտական
պառուհներից աւելի կատարեալ և անմիջական կերպով օգտուե-
լու հետ: Եւ իրօք սկսում է իսկական Որոգինէսի վերակեն-
դանութեան ժամանակը: Հէնց Աղէքսանդրիայում, ու Աթա-

* См. напр. св. Василия вел. „Къ юношамъ о томъ, какъ
извлекать пользу изъ языческихъ сочиненій“ и св. Григ. Бо-
гослова воспоминанія о времени пребыванія въ Аѳинахъ“. Бес.
43. 17—22.

նասի հետ միասին, Աղէքսանդրիայի կատեխիզական դպրոցի ղեկավարը և որոգինէսեան աւելի մաքուր աւանդութիւնները ներկայացուցիչը, հանրապէս կրթուած, յայտնի «տեսնող կոյր» Դիդիմոսը զարգացնում է գիտական-փիլիսոփայական գործունէութիւնը: Դիդիմոսը՝ դանուամ էր ամբողջովին Որոգինէսի ազդեցութեան տակ, թէև անվիճելի են նաև նրա վերայ եղած միւս ազդեցութիւնները ևս: Որոգինէսի հեղինակաւորութիւնը նրա համար հաւասար էր ս. Գրքի հեղինակաւորութեան: Նա ոչ միայն իւրացրեց Որոգինէսի վարդապետութեան աչքի ընկնող կէտերը, այլ և պաշտպանում էր նրանց **: Ընդհանրապէս, նա աւելի կախումն ունի Որոգինէսից, քան իւր ժամանակի որևէ աստուածաբան: Սակայն միւս կողմից, հիմնաւորապէս ցոյց են տալիս, որ Դիդիմոսը Որոգինէսից մասնաւորութիւնները վերցնելով, չթափանցեց հոգով նրա սկստեմի մէջ—նրան պակասում է Որոգինէսի տեսութեան ոյժը և նոյն իսկ գրաւումն դէպի նա: Դիդիմոսի գործունէութիւնը և ազդեցութիւնը նրա աշակերտները նեղ շրջանով չսահմանափակուեցին. այդ մասին վկայում է այն յայտնի փաստը, որ նրա աշխատութիւններից վկայութիւններ էին բերում ոչ միայն Կիւրեղ Աղէքսանդրացին, այլ և Ամբրոսիոս Մեդիոլանցին, նմանապէս և այն հանդամանքը, որ շատ քիչ աստուածաբաններ են օգտուում Գ. և Ն.-րդ դարերի քրիստոնիաների նիկիական այնպիսի տրամադրութիւնից քան Դիդիմոսը: Սովորապարտաբանը հաղիւ թէ խօսք է գտնում նրան բաւական գովելու: Դիդիմոսի բացառիկ գիտութեան փառքը հատուկ նոյն իսկ անապատական Անտոնիոս մեծին, որ շատ հեռու էր կանգնած ինչպէս դէպքերից, այնպէս էլ ժամանակի շարժումներից ***: Դիդիմոսը սկստեմատիք մտածող չէր: Անպայման հպատակուելով Որոգինէսի ներգործութեանը, նա իւր դաւանաբանական վարդապետութեան մէջ կախումն ունէր ս. Աթանասի տեսութիւններից, որոնց նա համաձայնեցնում էր աստուածաբանական մտքի նոր տարրերի հետ. ներկայումս առաջ է մղում նրա նշանակութիւնը դաւանաբանական տերմինոլոգիայի զարգացման մէջ, և եթէ հոստաապէս չէ կարելի ցոյց տալ նրա ազ-

* Leipold Joh. Didymus der Blinde von Alexandria. Leipzig, 1905 (Text u. Untersuch; herausgeb. v. Gebhard und Harnak N. F. XIV. 3).

** Сократъ, Церк. ист. IV. 25. Adv. Rufinum, I. 6. MPL. 23. 402., I. 16: MPL. 23. 409; II. 16: MPL. 23, 438—439.

*** Церк. Исторія IV. 25.

դեցուծիւնը այնպիսի աչքի ընկնող աստուածաբանների վերայ, ինչպիսին Կապպադովկիայի հայրերն էին, յամենայն դէպս աստուածաբանական գիտութեան պատմութեան մէջ նա կանգնած է նրանց և ս. Աթանասի մէջ տեղը:

Գիտական աստուածաբանական ոգու նոր բարձրացում, որ նկարագրում է Գիզիմոսը խոնարհուելով Որոգինէսի առաջ, իսառաւոր արտայայտութիւն դառաւ Կապպադովկիայի մեծ հայրերի՝ Բարսեղ Մեծի, որա եղբայր Գրիգոր Նիւսացու և սրա ընկեր Գրիգոր Աստուածաբանի գործունէութեան մէջ: Սրանցից իւրաքանչիւրի աստուածաբանութիւնը ներկայացնում է ինքնուրոյն առանձնայատկութիւններ, ինչպէս ընդհանուր բնաւորութեան մէջ, այնպէս էլ մասնաւորութիւնների մէջ, սակայն դրանք իսկապէս նոյն տեսակ աստուածաբանութեան այլաձևութիւններն են*։ Այդ աստուածաբանութիւնը իւր հիմնական սկզբունքներով և էական տարրերով խիստ բարդ ձևով է ներկայանում։ Նախ և առաջ նրա վերայ ազդեցութիւն է ունեցել Որոգինէսը, որ ներգործում էր Կապպադովկիայի հայրերի վերայ այնքան անվանելի կերպով, որ Որոգինէսի աստուածաբանութեան սկզբունքները հանդէս էին գալիս իբրև իրենց մայրենի երկրի աստուածաբանական աւանդութիւններ կենդանի աւանդութիւնը կապում էր նրանց Որոգինէսի անմիջական աշակերտի՝ Դոնիկեան շրջանի Գրիգոր Հրաշագործի ճանաչուած հեղինակաւորութեան հետ։ Յիշողութիւնները նրա մասին Կապպադովկիայի հայրերի մէջ, յատկապէս Բարսեղ Մեծի ընտանիքում, վերին աստիճանի կենդանի էին։ Սրա աստուածաբանական տեսութիւնները դեռ չէին մոռացուած. Կապպադովկիացիք իրենք են վկայում, թէ նրանց կրօնական կրթութեան վերայ իրենց երկրի առաքեալի խորհրդանշանը ինչ ազդեցութիւն է ունեցել**։ Կապպադովկիացիների աստուածաբանական մտքի նրանց ունեցած կախումն անվիճելի է։ Բայց Գրիգոր Հրաշագործը Կապպադովկիացիներին բերեց հէնց Որոգինէսի մօտ, նրանք մանրամասնօրէն ուսումնասիրում էին Որոգինէսին և սա գրաւում էր նրանց։ Բարսեղ Մեծը և

* Տես, Համեմատական բնաւորութիւնը ս. Բարսեղ Մեծի, Գրիգոր Աստուածաբանի եւ Գրիգոր Նիւսացու աստուածաբանութեան, Prof. Karl Holl-ի հետախուզութեան մէջ՝ *Amphilochius von Ikonium in seinen Verhältniss zu den grossen Kappadoziern*. Tübingen und Leipzig. 1904.

** Василий Велик. послание 196 (204) къ неокесарійцамъ: Рус. перев. изд. 3. (1892) ч. 7. стр. 67. св. Григорія нисскаго Слово о жизни святаго Григорія „Чудотворца“ Рус. перев. изд. 1872 г. ч. 8. стр. 126—197.

Գրիգոր Աստուածաբանը նոյն իսկ Որոգինէսի երկերի ամենաընտիր հատրնների ժողովածու—Ֆիլոհալիա կաղմեցէն: Որոգինէսի մեկնաբանական աշխատութիւնների ուսումնասիրութիւնը նրանց համար նախապատրաստութիւն էր Արիանոսեանների դէմ կռուելու համար: Սգաուելով Որոգինէսի աշխատութիւններից, նրանք արիանոսների հակաճառութիւններին խիստ պատասխաններ էին տալիս, և երբ վերջինները իրենք էին հենուում Որոգինէսի վերայ, այն ժամանակ նրանք ապացուցանում էին նրանց, որ նրանք Որոգինէսի հաւատի վարդապետութիւնը ուղիղ չեն հասկանում*: Եթէ նրանք չքիւրացրին Որոգինէսի սխալ կարծիքները (բայի Գրիգոր Նիւսացուց), սակայն անկասկած է, որ թափանցեցին նրա աստուածաբանական ոգու մէջ: Սակայն Որոգինէսի աղգեցութիւնը նրանց վերայ դանազան ատիճանի էր. Բարսեղ Սեծը, իբրև աւելի դործնական ուղղութեան տէր մարդ, աւելի զօրեղ և զրական հոգի, քիչ էր ենթարկւում Որոգինէսի աղգեցութեանը. այդ աղգեցութիւնը աւելի ցոլանում էր Գրիգոր Աստուածաբանի վերայ, իսկ Գրիգոր Նիւսացին հանդէս է գալիս իբրև իսկական Որոգինական: Որոգինէսի նման, նա էլ ազատ վարդապետում է այն խնդիրների մասին, որոնց մասին եկեղեցին որոշ դատողութիւն չէ տուել: Նա հարց է դնում հոգւոյ ծագման, ընդթի չարութեան, կամքի ազատութեան, հոգւոյ և նիւթի յարաբերութեան, յարութիւն առած մարմնի յատկութիւնների, ընդհանուր վերահանգնման մասին, թէև նա իւր եզրահանցութիւնների մէջ միշտ էլ համաձայն չէ Որոգինէսի հետ: Յամենայն դէպս անվիճելի է այն, որ Որոգինէսը նրա մէջ առաջ բերեց ձգտումն դէպի վերացականութիւնը և որոշեց նրա կրօնական փիլիսոփայութեան հիմնական ուղղութիւնը: Այդպիսով, որոգինիզմը, Գրիգոր Սքանչելագործի բացատրութեան մէջ և ազատութեան նորա այն ուսմանափակումներով, որ կատարուել էին ատիճանաբար մինչև այդ ժամանակ, և ծագում էին ինքն ըստ ինքեան եկեղեցական վարդապետութեան դրութիւնից, կազմում էր Կապապադովկիայի հայրերի աստուածաբանական դործունէութեան էական ենթադրութիւններից մէկը: Սակայն Որոգինէսը իսկապէս որոշում էր նրանց աստուածաբանութեան ընդհանուր ընաւորութիւնը և ոգին, միևնոյն ժամանակ տալով մի շարք դադափարներ և անհրաժեշտ տերմիններ: Իսկ նրանց աստուածաբանական վարդապետութիւնը իրեն հիմք ունէր նիկիական դաւանանքը. այստեղից ընականաբար ծագում է նրանց կախումն ու Աթանա-

* Сократъ, Церковная Исторія IV 26.

սի աստուածաբանութիւնից: Նրանք ս. Աթանասի աշակերտներն էին և դրանով ամրացրին իրենց կապը նոր—Աղէքսանդրիայի աստուածաբանութեան հետ, էական այն առանձնացաւ իր թեմամբ, որ ս. Աթանասի մօտ նկատելի կերպով դերակազմէին ս. Իրինէոսի Փոքր—Առիական աստուածաբանութեան ձգտումներն ու մօքերի շրջանը, իսկ Կապպադոկիայի հայրերի մօտ—Որոգինեան ուղղութիւնը: Այս դերակազմութիւնը բացատրւում է ոչ միայն Որոգինէոսի նրանց վերայ ունեցած մեծ ազդեցութեամբ, այլ և այն քաջալերութեամբ, ինչպիսին որ որոգինիզմը նրանց լայն և խորին կլասիկ կրթութեան մէջ գտաւ: Այդ քաջալերութեան շնորհիւ, նրանք հասկացան հելլենական քաղաքակրթութեան և գիտութեան ոգին և իրենց ժամանակի գիտական աշխարհահայեցողութեան աստիճանի վերայ էին գտնուում: Երբ Կապպադոկիայի հայրերը դիմեցին հելլենական գաղափարներին, արդէն վաղուց անցել էին մի փիլիսոփայական սխալեմի և ուղղութեան տիրապետութեան ժամանակները. Դ. դարում սինկրետիզմը մտաւ իւր իրաւունքների մէջ, և ամեն ոք ընտրում էր իւր սեպհական ճանապարհները, փոխ առնելով մի կամ միւս սխալեմից անհրաժեշտ փաստեր իւր սեպհական շինութիւնների համար: Ուստի և Կապպադոկիայի հայրերի մօտ մենք տեսնում ենք մի կողմից պղատոնական և նոր—պղատոնական ազդեցութեանց դերակազմութիւնը, որոնք յատուկ էին Որոգինէոսեան ուղղութեան վարդապետութեան, և հաստատում ու պարզում էին նրան. սակայն միւս կողմից նրանք օտար չէին Արիստոտելի տեսութիւններին: Արիստականութեան հետ կռիւը, գլխաւորապէս Եւնոմիայի հետ, որը Արիստոտէլի փիլիսոփայութեան օգնութեամբ հաղորդեց արիստական դաւանութեան երկախօսական, գիտական—փիլիսոփայական ձև, ստիպեց կապպադոկիացիներին չնայած նրանց դէպի Արիստոտէլն ունեցած արհամարհանքին որոշ չափով օգտուել նրա դպրոցի ճշգրիտ հասկացողութիւններով, որը չէր կարող առանց ազդեցութեան մնալ նրանց աստուածաբանական վարդապետութեան մի քանի կողմերի և նրա տերմինօգիւծի վերայ: Վերջապէս, եկեղեցական—պատմական հանգամանքները և Կապպադոկիայի հայրերի սեպհական ձգտումները եկեղեցւոյ ծառայութեան մէջ նրանց դրեցին մօտ յարաբերութեան մէջ, մանաւանդ Բարսեղ Մեծին, աստուածաբանութեան այն ժամանակուայ պահպանողական ուղղութեան աչքի ընկնող գործիչների հետ, որ ներկայացնում էր Փոքր—Առիական աստուածաբանութեան տւանդութիւնները. ս. Աթանասի ազդեցութեան հետ այդ աստուածաբանութիւնը անկասկած իւր ներգործութիւնն է ունեցել նրանց աստուա-


ծաբանութեան բնաւորութեան ուղղութեան վերայ, պահպանելով բնազանցական միակողմանի հարցերով տարուելուց և գրգելով ուշադրութիւն դարձնել գործնական—կրօնական հարցերի վերայ: Էական տարրերով այսպիսի առատութեան ժամանակ, որոնք գործարանապէս միանում էին Կապպադոկիայի հայրերի աստուածաբանութեան մէջ, նրանք իրենց կողմից խիստ նպաստեցին եկեղեցւոյ աստուածաբանական գիտութեան զարգացմանը: Այն, ինչ որ ս. Աթանասը արտայայտեց, թէ և խորին փիլիսոփայական ոգով, սակայն առանց հարկաւոր ձևական տրամաբանական մշակման, ինչպէս աւելի ս. Գրոց եկեղեցական դաւանաբանութիւն քան խիստ փիլիսոփայական թէորիա, նրանք զարգացրին գիտական—տրամաբանական և փիլիսոփայական—քննական մեթոդով, վերածելով ժամանակի փիլիսոփայական հասկացողութեանց իսկական լեզուի^{*}: Այդ պատճառով Կապպադոկիայի հայրերի աստուածաբանական վարդապետութիւնը եկեղեցական աստուածաբանութեան պատմութեան մէջ մեծ նշանակութիւն ունի: Նրանց աստուածաբանական երկասիրութիւնների մէջ ս. Երրորդութեան հարցը իւր վերջնական որոշումն ստացաւ, և ս. Երրորդութեան մասին նրաց հաստատած եկեղեցական հասկացողութիւնը և նրանց ստեղծած ֆորմուլաները դարձան թանկագին սեպհականութիւն ուղղափառ աստուածաբանական դաւանաբանութեան, սակայն նրանք միայն բացատրեցին և բացեցին եկեղեցւոյ հաւատոյ վարդապետութիւնը, ինչպէս որ այդ արտայայտուած էր նիկիական ժողովում, չփոխելով նրա էութիւնը: Բարսեղ Մեծի, Գրիգոր Աստուածաբանի և Գրիգոր Նիւսացու աւաքելութիւնը այլ էր, քան ս. Աթանասինը. նրանք կոչուած էին եկեղեցական կեանքի կրիտիքական մոմենտում վարդապետութեանը ձև և իսկական արտայայտութիւն տալու, որ հէնց սկզբից կաթողիկէ եկեղեցւոյ մէջ պահպանւում էին և որի պաշտպանութիւնը ս. Աթանասը իրեն կեանքի նպատակ էր դրել: Ս. Գրիգոր Աստուածաբանը այս վարդապետութիւնը ներկայացրեց իւր ամբողջ պարզութեամբ և նրան կատարեալ արտայայտութիւն տուեց, որը հաւատոյ ամենաբարձր գաղանիքները հանրամատչելի էր դարձնում: Բարսեղ Մեծը նրան կեանքի մէջ ներմուծեց, իսկ Գրիգոր Նիւսացին նրան գիտական—փիլիսոփայական հաստատութիւն տուեց: Սակայն, հիմք ունենալով հաւատոյ աւանդական վար-

* Проф. А. Орловъ, Тринитарныя воззрѣнія Иларія Пиктавійскаго. Историко-догматическое изслѣдованіе. Сергіевъ Посадъ 1908, стр. 260.

դապետութիւնը և յենուելով ու Աթանասի աստուածաբանական վարդապետութեան վերայ, Կապադոկիայի հայրերի աստուածաբանութիւնը, նրան կազմող տարրերի և զանազան ազդեցութիւնների կախումով, կրօնական բարոյական աշխարհահայեցողութեան ընդհանուր ոգու մէջ այնպիսի առանձնայատկութիւններ է ներկայացնում, որ նա իրենով ոչ միայն եկեղեցական վարդապետութեան ի յայտ ածելու և հաստատելու յաջորդ շրջանն է ներկայացնում, այլ և ու Աթանասի հետ համեմատած, Աղէքսանդրիայի դպրոցի հասանքի մէջ մի առանձին ինքնուրոյն՝ այսինքն Կապադոկիայի աստուածաբանութեան կնիքն է կրում: Նրա էական մասը ներկայացնում է այն բարձր գիտական հետաքրքրութիւնը, որ երևան է դալիս քրիստոնէութեան ընդհանուր հատկացողութեան, հին քաղաքակրթութեան հետ նրա ունեցած յարաբերութեան, աստուածաբանական հարցերի լայն և խորը կերպով հրապարակի վերայ դնելու մէջ: Կապադոկիայի հայրերը կարծէք թէ ուղղում են եկեղեցական աստուածաբանութեան գիտական գիծը, հարստացնելով նրան ու Աթանասի փորձերով և գիտական հետաքրքրութեան հետ կապում են եկեղեցւոյ կրօնական — փորձնական իդէալների անձնութիւնը:

(Շարունակելի)

Արսակ վարդապետ



ԲԱԳԱ ԳԻՒՂԻ ԱՌԵՐՈՒՄԸ

(Շարունակութիւն)

Բազեցոց նպատտ հասցնելու գործն այնքան էլ արագ չէր կատարւում, որովհետեւ այդ ժամանակամիջում երկաթուղիների գործադուլ էր և Մեդրք քահանան իւր նպատաներով հազիւ կարողացաւ 1906 թուի Յունուարի առաջին օրը դուրս գալ Թիֆլիզից Փանձակ յաջորդի մօտ, որը լիազօր էր նպատաները բաժանելու: Վարդապետն սկսեց բաժանել այն բազայիներին, որոնք այդ միջոցին հասել էին Փանձակ: Նպատտ բաժանելու լուրը հրապուրեց քաղցած բազայիներից շատերին գէպի Փանձակ: Բայց նրանցից շատերը դեռ բաժանուած էին հայ գիւղերում, մանաւանդ Փանանց և Խաչկապ գիւղերում: